

Արժուրային քաղաքականությունը և համախառն պահանջարկը

Տնտեսությունից իրական և դրամական հատվածների հավասարակշռությունը նկարագրում ենք IS-LM ուղիղների միջոցով: Դրանց հատման կետը իրական եկամտի և անվանական տոկոսագրության այն զուգորդումն է, որի դեպքում համախառն պլանավորված ծախսերը հավասար են իրական եկամտին, և փողի իրական հաշվեկշիռը հավասարակշռված է:

Գծ.1-ում IS-LM սկզբնական հավասարակշռությունը e_1 կետում է: LM ուղիղի դիրքը, ինչպես հայտնի է, կախված է փողի իրական հաշվեկշիռից: e_1 կետում փողի առաջարկը M_1 է, իսկ գների մակարդակը՝ P_1 : Ըստ այդմ՝ փողի իրական հաշվեկշիռը M_1/P_1 է:

Դիտարկենք գների մակարդակի P_1 -ից P_2 աճի ազդեցությունը: Փողի իրական հաշվեկշիռը M_1/P_1 -ից կնվազի M_1/P_2 : LM ուղիղի վրա ազդեցությունը նույնն է, ինչ-որ փողի անվանական առաջարկի նվազման դեպքում: LM ուղիղը կտեղաշարժվի ձախ. LM_1 -ից LM_2 , և նոր հավասարակշռությունը կհաստատվի e_2 կետում:

Քանի որ գների մակարդակի աճի արդյունքում փողի իրական առաջարկը նվազում է, ապա հավասարակշիռ տոկոսագրության բարձրանում է, ինչից՝ պլանավորված ներդրումները և հետևաբար՝ իրական եկամտի հավասարակշիռ մակարդակը նվազում են:


Դրանով իսկ՝ e_2 կետում տոկոսագրության բարձրացել է, իսկ իրական եկամուտը նվազել է:

Գների մակարդակ և իրական եկամուտ տարածությունում e_1 -ին համապատասխանում է l_1 , իսկ e_2 -ին՝ l_2 : Այսինքն՝ գների մակարդակի աճին համապատասխանում է իրական եկամտի նվազումը, և ամբողջական պահանջարկի գրաֆիկը վարընթաց է:

Կարևոր է շեշտել, որ ամբողջական պահանջարկի յուրաքանչյուր կետի համապատասխանում է IS-LM մեկ հավասարակշիռ կետ, այսինքն՝ գին-իրական եկամուտ յուրաքանչյուր զուգորդման համապատասխանում է տոկոսագրության-իրական եկամուտ զուգորդում, որում համախառն պլանավորված ծախսերը հավասար են իրական եկամտին, և փողի իրական հաշվեկշիռը հավասարակշռված է:

Գծանկար 1:

Ամբողջական պահանջարկի գրաֆիկի դուրս բերումը



Այժմ անդրադառնանք արժույթային քաղաքականության ներգործությունը:

Համարենք՝ երկրի արտաքին մրցունակությունը բարելավելու նկատառումով ԿԲ որոշում է արժեզրկել արժույթը: Ինչպե՞ս կանդրադառնա ԿԲ քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա:

Ազգային արժույթն արժեզրկելու նպատակադրումն իրագործելու համար ԿԲ ընդլայնում է փողի անվանական առաջարկը: Արդյունքում՝ փողի իրական հաշվեկշիռը բարձրանում է, ինչից LM ուղիղը տեղաշարժվում է աջ:

Միևնույն ժամանակ, արժույթի արժեզրկումը հանգեցնում է IS և BP ուղիղների աջ տեղաշարժին:

Նկարագրված տեղաշարժերի արդյունքում ամբողջական պահանջարկն ընդլայնվում է (AD տեղաշարժվում է աջ): Ընդ որում, ամբողջական պահանջարկի ընդլայնումն այնքան ավելի մեծ է, որքան բարձր է կապիտալի տեղաշարժելիության մակարդակը (գծ. 2):

Հարգելի ուսանողներ: Թե ինչպե՞ս է փողի անվանական առաջարկի աճը հանգեցնում ազգային արժույթի արժեզրկմանը՝ նկարագրել եմ 18-րդ գլխի խնդիրներում (էջ 75-79):

<http://armeconomist.com/lecture/Problem Set 9 Exchange Rate.pdf?1>

Իսկ թե ինչպե՞ս է ազգային արժույթի արժեզրկումը տեղաշարժում IS և BP ուղիղները՝ նկարագրել եմ 18-րդ գլխում:

<http://armeconomist.com/lecture/17.Mundell Flemming 2017.pdf?1>

Գծանկար 2:

Արժեզրկման ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա

